ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

2 հունիսի 2016 թվականի **թիվ 52** քաղ. Մոսկվա

«Ապրանքների հայտարարագրի լրացման կարգի մասին» հրահանգի թիվ 2 հավելվածում փոփոխություններ կատարելու մասին

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20–ի թիվ 257 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների հայտարարագրի լրացման կարգի մասին» հրահանգի թիվ 2 հավելվածում կատարել հետեւյալ փոփոխությունները.

ա) IV բաժնում՝

3-րդ վանդակում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8701 20 101, 8701 20 901 ծածկագրերով դիրքը լրացնել հետեւյալ բովանդակությունն ունեցող պարբերությամբ.

«այն սարքվածքի կամ արտակարգ օպերատիվ ծառայությունների կանչի համակարգի նույնականացման համարը, որով սարքավորված է տրանսպորտային միջոցը (առկայության դեպքում)***».

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 եւ 8705 ծածկագրերով դիրքերում 3-րդ վանդակի տեքստը լրացնել «***» նշանով.

բ) լրացնել հետեւյալ բովանդակությունն ունեցող 3-րդ ծանոթագրությամբ՝

«3. Ապրանքների մասին «***» նշանով նշված տեղեկությունները ենթակա են նշման՝ տրանսպորտային միջոցները «ներքին սպառման համար բացթողում», «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)», «վերաներմուծում» եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգերով ձեւակերպելիս։»։

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից։

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան